

նայն Հայոց, եւ Սինոզի սրբոյ Էջմիածնի տնօրէնութեամբը Հին - Նախիջեւանու հասարակութիւնը, օրերումս ստացան իրաւունք բանալոյ Հոգեւոր դպրոց Սուրբ Երրորդութեան եկեղեցւոյ սրահումը, ուր կային պատրաստուած վիճակային արդեամբ քանի մի յարմարաւոր սենեակներ. եւ որոյ հոգատարութեան համար հաստատուեցան ի սրահոն հոգաբարձութեան, նոյն քաղաքացի պարոնայր մահտեսի Մկրտիչ Թունեանց, Կարապետ Գասպարեանց եւ Ստեփան Սիմարեանց: Այլ եւ յիշեալ հասարակութիւնը եւս արժանացան Նորին Վեհափառութեան մի քաղցր խնամակալութիւնը վայելել, ընդունելով յօգուտ դպրոցին յիշեալ եկեղեցւոյ ունեցեալ 4000 ռուբլի դրամազկէտ մի միայն տոկոսիբը:

Քարտուղար Հոգեւոր Կառավարութեան  
Հայոց Հին - Նախիջեւանու

Գէորգ Յարութիւնեանց

ի 25 մարտի 1869 ամի

ի Նախիջեւան:

... ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱՏ ԱՄՍԱԳՐՈՅ.

Եւրբ Վեհափառ Կաթողիկոսը՝ նախնի սովորութիւնը վերանորոգելով՝ բարեհաճեցաւ Էջմիածնայ միաբաններէց մի քանիսն մեծ պահոց մէջ շրջակայ զիւղորայքը ուղարկել քարոզութեան, ինձ վիճակեցաւ Երեւանայ Օանկիպասարու եւ Գառնիպասարու դաւառների ժողովուրդը:

Եյս դաւառները, որոնք մինչեւ այս օրս թէ բարոյապէս եւ թէ մտաւորապէս շատ յետ էին մնացած, այժմ շնորհիւ Գերապատիւ Մեսրոպ վարդապետի Ամբաստանց, որ տեղեցոյս առաջնորդն է, սկսել են հոգ տանել իրանց բարոյական եւ մտաւոր զարգացմանը: Գերապատիւ Մեսրոպ վարդապետն ամենայն սիրով եւ հնազանդութեամբ Վեհափառ Կաթողիկոսի հանրաշահ եւ ազգօգուտ տնօրէնութեանց եւ պատուիրանաց կատարմանը հետեւում է. ազգասիրական ոգեով վառուած՝ կատարում է նա իւր պաշտօնը եւ պարտաւորութիւնը. լրացնում է ժողո-

վրդան արդի ամենակարեւոր պիտոյքը. հաստատում է շատ զիւղերում դպրոցներ եւ նրանք բարեկարգում է յարստեւ արդիւնաւոր զարգանալու համար, որով եւ Նորին Վեհափառութեան քաղցր ակնարկութեանց եւ շնորհաց արժանի է գտնւում:

Թէեւ շատ զիտողութիւններ արած եմ այդ դաւառների մասին, սակայն նրանք թողում եմ յետոյ, միայն այսքանս առ այժմ խնդրում եմ Ձեր . . . խմբագրութեան՝ Երաբատի էջերի մէջ ղետեղել ի միւրթաւութիւն սրաից բարեկաշտ ժողովուրդոյ վերջիշեալ դաւառների, եւ ի խրախուսութիւն Նորին Գերապատուութեան, որից շատերն կ'յուսամ այլպիսի բարի օրինակներ առնելու են, եւ հետեւելու միշտ իրենց ազգին ջերմեռանդութեամբ ծառայել, ինչպէս որ իրենց կոչումն պահանջում է:

Գրիգոր վարդապետ Տէր Ստեփաննոսեան

ի 12 ապրիլի 1869 ամի

ի զիւղն Վալին

(երբեմն մայրաքաղաք Հայոց):

Եյս անգամ այլ եւս տեղ չ'ունենալով, Կարսէն եկած եւ ուրիշ մի քանի նամականիք յետաձգել պարտաւորեցանք:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Երկու հանգամանք մարդոց շօշափելի սխալանքի մէջ են ձգում. մէկ, երբ պատճառներ են վերադրում այնպիսի հանգամանքների, որոնք պատահած չեն. երկրորդ, երբ մի գործի օգտուէտ նպատակը չը սրոշած, նորա գործադրութեան կերպերի վերայ են խօսում:

\* \* \*

ՆՊԱՏԱԿ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ուսուցանել, կրնանակել սորվեցնել մի բան, իսկ կրթել, կրնանակել վարժել մի բանի մէջ կամ

անհցնել, դարգացնել այն զօրութիւնը, բնունակութիւնը, որ արդէն կայ անհատի մէջ: Այն արհեստը, որ կայանում է այդ երկու պաշտօնի ի միասին կատարելումը, ասվում է **ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ**:

Կեծ է դաստիարակի գործը եւ սրբազան է նորա պաշտօնը. վասն զի ո՛վ որ բանական արարածին ձեռք է առնում, նորան կատարեղագործելու մտօք, նախ եւ առաջ հարկաւոր է խմանալ, Թէ ինչ է նա, ինչպիսի ինչ է, եւ ինչո՞ւ համար է:

Կարգը, որ զիտէ քննել երկինքը եւ երկիրը, ծով ու ցամաքը, ո՛չ մի հարց լուծելու համար այնքան չէ դժուարանում, որքան իւր անձին վերաբերեալ հարցին մէջ, Թէ ինչ է ինքը, ինչ է իւր զոյւթեան նպատակը եւ ինչ կարող է լինել: Արդարեւ մի անքննելի արարած է մարդը եւ մտքի կարողութեան սահմանից բարձր, բայց այնչափ անքննելի է, որչափ մի միջատը եւ մի հատիկ աւաղը բնութեան մէջ. պատճառով իմացաւ եւ դոցա բուն սկիզբն եւ վախճանը... Բայց որ այս վերջինների նշանակութիւնը աւելի հեշտութեամբ է լուծում քան Թէ իւր, դորա պատճառը ո՛չ այլ ինչ է, բայց միայն իւր կուրօքէն ինքնասիրութիւնը, որ Թոյլ չէ տալիս իւր նշանակութիւնը նոյն չապով վճռած տեսնել: Այս հանգամանքը դաստիարակութեան մէջ մեծամեծ խռովութիւններ է յարուցանում եւ դաստիարակներին երկու մասնի բաժանում. մէկ մասը բարձր է այս կողմ, միւսը այն. մէկը յառաջ, միւսը յետ. բայց իսկապէս երկոցունց ընթացքն եւս չէ ուղիղ եւ չէ յարմարացած բնականին:

Կարգը, ըստ ներքնոյն, զանազանվում է անասունից իւր անմահ հոգւովը եւ բանականութեամբը: Բանականութեան սկզբնապատճառը նորա միտքն է, որ է հաւարումն տպաւորութեանց յարտարուստ ի ձեռն ներքին եւ արտաքին զգայարանաց, իսկ հոգին մարմնոյ կենդանութիւնն է եւ նորա սկիզբն ու վախճանը, որ ծաղում է Աստուծոյց եւ դառնում դարձեալ դէպի նա: Ասել է, Թէ մարդը ունի մարմին, հոգի եւ միտք, եւ դորա եւեթը ի միասին են կազմում մարդուս ամբողջ գոյութիւնը: Կարմին առանց կենդանութեան եւ մտաց, չհղորական առարկայ է: Կենդանութիւն, առանց մարմնոյ եւ մտաց, երեւակայելի էակ է: Կիտք, առանց կենդանութեան եւ մարմնոյ, չէ ինչ: Կարմին եւ կենդանութիւն, առանց մտաց, անբան կենդանի է: Կենդանութիւն եւ միտք, առանց մարմնոյ, անիմանալի զօրութիւն է: Կիտք եւ մարմին, առանց կենդանութեան, չէ ինչ: Կարմին կենդանութեամբ եւ մտօք հանգեթ՝ — է մարդ բանական, հանճարոյ եւ առաքինութեան ընդունակ.

Դորա երեքն ի միասին մի ամբողջութիւն են կազ-

մում, բայց իւրաքանչիւրի յատկութիւնը երեւում է, եւ իւրաքանչիւրը իւր յատկութեանը յարմար պահանջ մունքներ ունի: Դոցա իւրաքանչիւրի յատկութիւնը ճանաչելու համար, մենք կասենք որ —

Այն յատկութիւնները, որոց մասին կարելի է ասել — զօրեղութիւն, ճարպիկութիւն եւ Թուլութիւն, դորա մարդուս մարմնական յատկութիւններն են:

Այն յատկութիւնները, որոց մասին կարելի է ասել — առաքինութիւն կամ մոլութիւն, դորա մարդուս հոգեկան յատկութիւններն են:

Այն յատկութիւնները, որոց մասին կարելի է ասել — խելօքութիւն կամ անխելքութիւն, դորա մարդուս մտքի յատկութիւններն են:

Այս որոշումներից պարզ երեւում է, որ մարդուս երեք կողմից իւրաքանչիւրը ունի ստոր եւ վսեմ յատկութիւն. ինպէս, ուժեղութիւն, Թուլութիւն, առաքինութիւն, մոլութիւն. խելօքութիւն, անխելքութիւն.

Դաստիարակութեան միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդուս այդ երեք կողմն ի միասին, որպէս զի նա լինի ուժեղ, խելօք եւ առաքին: Ո՛չ մի մարդու դաստիարակութեան կերպ պիտի չշեղի այս բնական ճանապարհից միմիայն նորա համար, Թէ նա այս կամ այն կողմը պիտի ստանայ. վասն զի մարդս նախ եւ առաջ մարդ է, եւ տալա կիրակոս կամ մարկոս<sup>\*)</sup>: Եւ տեսէք, ինչպէս քաղցր են հնչում մեր ականջումն այս բառերը — ուժեղ, խելօք եւ առաքին:

\*) Մենք այսօրուան օրս կրօնական ազգ լինելով, կարող չենք ասել, որ մեր ժողովրդին գիտութիւն պէ՛տք է. եթէ ժողովրդին պէ՛տք է գիտութիւն, որքան առաւել պէ՛տք է նա ժողովրդի առաջնորդներին, որոնց ձեռքումն է նորա հոգւոյ եւ մարմնոյ ձգտողութեան դէպը. Որպէս զի նոքա լինեին հմուտ իբեկն գործին եւ նաւորդներին ծովածուի կենցաղոյս ալիքներին ջմասներին, հարկաւոր է նոցա գիտութիւն հաւգամանգների եւ պատճառների — քե՛ քաղաքական լինեին նոքա եւ քե՛ բնական, քե՛ հոգեկան եւ քե՛ մարմնական. Որպէս զի մեր Բիսոսասուր Կօնը, մեր նախնի հոգւոր եւ մարմնաւոր հարց արիւնով պահպանած եւ մեզ աւանդած Կրօնը (եւ լեզուն) երէխայամիս մարդոց ձեռքին խաղալիկ շղառնայ, հարկաւոր է, որ նորա պատշոնեաները եւ ուսուցանողները լինին գիտութեան ճեղեակ, վասն զի կրօնի վսեմ եւ երկնային ազդեցութիւնը միմիայն ի ձեռն գիտութեան կարելի է տպաւորել մի զազացած միտք ունեցող հոգւոյ վերայ.

Կարդուս միտքը զարգանում է տարբեր-տարբեր

նի: Երբ բանը ընտրութեան է ընկնում, կարծես մի ներքին պատերազմ է բացվում հոգւոյ, մարմնոյ եւ մտաց մէջ, եւ ամեն միւր զօրաւոր փաստերով ապացուցանում է իւր կատարեալ լինելու կարեւորութեան իրաւունքը եւ չնն ուզում, որ իրանց առ միմեանս ունեցած քնական, սերտ կապակցութիւնը խմաստակի ձեռքը խախտէ:

Ուրեմն մարդուս երեք կողմն ի միասին պիտի լինի զարգացած, որ նա լինի կատարեալ մարդ: Եթէ այսպէս է, ապա եկէք տեսնենք ինչ միջոցով կարող ենք հասնել մենք այդ նպատակին: Նախ խօսինք իւրաքանչիւր կողմի զարգացնելու զիւրին եւ քնական

դարեց-գար. Սկզբումը նա կրօնի միայն արտաքին ձեւերն ու արարողութիւնքն է ընդունում եւ հաւատում անգլխակցաբար, երկիւղից կամ սովորութեանից քելագրուած, առանց զգալու երկնային Տիրոջ կենսասու եւ անմահացուցիչ սէրը. բայց յետոյ, երբ վրայ է գալիս նորա մէջի զարգացման երկմտողական (սեփսիփական) օրջանը, նա այդ ժամանակ ուզում է նախ համոզուիլ եւ ապա հաւատալ. Ահա այդ միջոցին կրօնուսույցը պէտք է ունենայ մի զարգացած միտք, որ կարողանայ իւր աւակերտաց կամ իւր ժողովրդեան մէջի եւ հոգւոյ մէջ հաշտութիւն եւ հաւասարակեռութիւն պահպանել. Բայց երբ կրօնուսույցը կամ Լարոզիքը հեղում է գիտութեան աշխարհայ եւ օգտաւէրի նեմահարութիւնը, շիմանալով նորա եւ այբուբենը, այդպիսիները կրօնի անհուն բարձրութիւնը կարի ստորացնում են եւ նորա հետ ի միասին կորցնում իրանց պատիւն ու յարգանքը քէ աւակերտաց եւ քէ ժողովրդոց առջեւ. վասն զի այդ մի եւ նոյն է ասել, քէ որովհետեւ մեզ մի անմահ հոգի ունինք, էլ ինչ պէտք է մեզ մարմին. հարկաւոր է դորան արախողիտը եւ խեղդաման առնել.... Ինչ է պատահաւոր, որ մեր զպրոցների աւակերտք սաստիկ բոյլ են լինում կրօնական եւ բարոյական զգացմանց մէջ եւ գործով էլ ապացուցանում են իրենց սկաւորութիւնը, մի առանձին հակակրօնութիւն ցոյց տալով դեպի կրօնը եւ նորա ուսուցիչը. Փորձը ցոյց է տալիս, որ այն աւակերտները, որոնք ամենեւին շէն ուսել կրօն, աւելի բարոյական եւ կրօնասէր են, քան քէ նոքա, որոնք երբեք չեն սկսեց կրօնուսույցի նուումաբանութեան. բայց մի՞թէ այսպէս կը լինէր, երբ կրօնուսույցը մի բարեկիրք եւ գիտական անձն լինէր.

կերպի վերայ, եւ ապա մի կերբական շղթայով այլ երեքի ներգործութիւնը մի տեղ բերելով, ուղղենք դէպի կեանքը: Բայց այս անելուց առաջ եւ հարկաւոր եմ համարում նախ եւ առաջ զծաղրել մի միակողմանի կրթուած մարդու պատկեր, այդ հանգամանքի վատութիւնը եւ վնասակարութիւնը ակներեւ. կացնելու համար. եւ վերջնենք միտքը, ըստ սրում դա աւելի զբաւում եւ յափշտակում է մարդոց:

Մի մարդ անուշադիր եղաւ իւր քնաւորութեան եւ մարմնոյ զարգացման վերայ, կարծելով, թէ միակ փիլիսոփայ դառնալով ամեն կողմով կատարեալ կըլլին. ուստի սկսաւ իւր միտքը միայն մշակել, մինչեւ շինեց նորան մի հարուստ շտեմարան տեսական դիտութեանց: Բռնելով մարդկութեան մտքի զարգացման թելի սկզբից, հասաւ մինչեւ իւր օրերը. նորա միտքը զանազան կարծիքների ազդեցութեամբ կերպ կերպ փոփոխմունք ստանալով եւ տարածամ յոյնելով, կանկ առաւ մի կէտի վերայ: Իրեւ խելացի եւ ուսման ճաշակը առած մարդ, սկսաւ հաշիւ տալ ինքն իրեն, թէ ինչ է ինքը: Ինչպէս մի հիւանդ մարդ զգայ իւր տկարութիւնը, բայց բժշկվելու չափ կենդանական զօրութիւն չունենայ իւր մէջը, նոյնը պատահեցաւ եւ մեր միակողմանի զարգացած դիտնականին: Նա տեսաւ, որ թէպէտ շատ բաներ է ձեռք բերել արտաբուստ, բայց եւ շատ բաներից է զբրկվել ի ներքուստ, որոնք եթէ մնացած լինէին, աւելի մեծ օգուտ կը բերէին իւր անձին, քան թէ իւր ձեռք բերածները, որոնք առանց նոյա ոչինչ են: Ամօթ, երկիւղ, զարմանք, ուրախութիւն, հոգեկան զմայմունք, տրտմութիւն, սէր, հաւատ, խիղճ, երեւակայութիւն, աշխոյժ, եռանդ, եւ այլ այսպիսի շատ բաներ անհետացան նորա բնութիւնից եւ ոմանց միայն չնչին նշանը մնացին: Նա գործունեայ էր իւր անձը բնազդողաբար պահպանելու չափ: Նորա մարմնոյ զծաղիրը տեսնելու բան չէր: Աչքերը խոր էին ընկել, ծնօտը սրուել, մազերը թափուել, ստամոքսը խանգարուել, թոքերը մաշուել, ջիւղերը չորցել, մէջքից կեռացել եւ վերջապէս դարձել մի դիտնական կրմախք: Այս մարդը որ պիտի հանձնար դառնար, տղիտացաւ, մոլիացաւ, եւ նուազեցաւ: Վասն զի քանի՜ բանի դիտնալու բաներ կան, որոց մեր միտքը կարող չէ հասնիլ առանց օգութեան մարմնոյ ուժի եւ հոգւոյ վառ երեւակայութեան եւ ընդ հակադարձն:

(շարունակելի)

Դ. Ա. Դ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԷԶՐԻԱԾՆԻ

ՀՐԱՄԱՆԱԻ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ